

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

ԱՀ, ք. Ստեփանակերտ, Վազգեն Սարգսյան 25ա

Հեռ. (+374 47) 94 28 58, ֆաքս (+374 47) 97 42 14

Էլ. փոստ info@artsakhhek.am

Ինտերնետային կայք www.artsakhhek.am

Հաշվետվություն թիվ 1, 03.02.21թ

Սույնով տեղեկացնում ենք, որ 2021 թվականի հունվարի 29-ին կայացել է «ԱՐՑԱԽ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի նիստ:

Ստորև ներկայացվում են տնօրենների խորհրդի կողմից ընդունված որոշումները (նիստի արձանագրությունը կազմվել է 29.01.21թ-ին):

Վ. Բեգլարյան

(ստորագրություն)



«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

Գլխավոր տնօրեն

03.02.2021թ.

«ԱՐՅԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

«29» հունվարի, 2021թ

N 1-2021/01

ք.Ստեփանակերտ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԱՀ օրենքի 84-րդ հոդվածը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 12.6 կետը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի 29.01.2021թ. նիստի N1-2021 արձանագրությունը, ինչպես նաև ելնելով հետպատերազմական ստեղծված իրավիճակից և հաշվի առնելով, որ կառուցվող «Քարվաճառ» ՓՀԷԿ-ի տարածքը Շահումյանի շրջանում անցել է Ադրբեջանի վերահսկողության տակ, ինչպես նաև «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ստեղծված ֆինանսական սուղ իրավիճակը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհուրդը որոշում է՝

1. Դադարեցնել «Քարվաճառ» ՓՀԷԿ-ի և «Հաթերք Սոլար» արևային կայանի շինարարական աշխատանքները:

2. Հանձնարարել տնօրինությանը կնքել լրացուցիչ համաձայնագրեր, S.T.E. Energy և KGAL New Frontiers ընկերությունների հետ, պատրաստված և մատակարարման ենթակա սարքավորումները երրորդ կողմին վաճառելու համար:

Խորհրդի նախագահ՝

Ա. Բալայան



**«ԱՐՅԱՆ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ

«29» հունվարի 2021թ.
ք.Ստեփանակերտ

N 1-2021/02

Մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Արցախի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածը, «Արցախի ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 12.2 կետի թ) ենթակետը, «Արցախի ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ««Արցախի ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության իրականացվող հրապարակային մրցույթի կազմակերպման մասին» կանոնակարգի 10-րդ կետը և «Արցախի ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի 29.01.2021թ. նիստի 1-2021 արձանագրությունը՝ «Արցախի ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհուրդը որոշում է՝

1. Ընկերության 2021 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության համար ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով՝
2. Սարգիս Գրիգորյան - Ընկերության Տնօրենների խորհրդի անդամ
3. Արա Ղոնյան - Ընկերության Տնօրենների խորհրդի անդամ
4. Արսեն Բազիկյան - Ընկերության վերստուգող հանձնաժողովի նախագահ

Խորհրդի նախագահ՝

Ա. Բալայան